ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 15.07.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ

թիվ ԳԲՔԱ-LO-2019/44

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի

Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Մասնակցությամբ՝

Բողոքաբեր՝ «Նարսան» ՍՊԸ-ի տնօրեն՝ Ս. Հարությունյանի, ներկայացուցիչ՝ Ն. Խաչատրյանի,

Պատվիրատու՝ ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացուցիչ՝ Գ. Նադիրյանի,

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ քննության առնելով «Նարսան» ՍՊԸ-ի (այսուհետ՝ նաև Ընկերություն) կողմից 24.06.2019թ. ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>Գործի նախապատմությունը</u>**

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է՝

1. Չեղյալ հայտարարել ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/24 գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի թիվ 11 արձանագրության 1.3 կետով «Նարսան» ՍՊԸ ներկայացրած հայտը մերժելու մասին որոշումը,

2. Չեղյալ հայտարարել ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/24 գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի թիվ 11 արձանագրության 1.4 կետով «Նարսան» ՍՊ ընկերությանը գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու վերաբերյալ որոշումը:

Բողոքը Բողոքներ քննող անձին է մակագրվել 24.06.2019թ.-ին և նույն օրը որոշմամբ բողոքը ընդունվել է վարույթ և 03.07.2019թ.-ին նշանակվել է նիստ:

Բողոքի քննությունն ավարտվել է 03.07.2019թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 15.07.2019թ.-ին:

2. «Նարսան» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Նարսան» ՍՊԸ-ն ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

1. ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կարիքների համար շինանյութի և տնտեսական ապրանքների մատակարարման նպատակով կազմակերպվել է թիվ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/24» ծածկագրով գնանշման հարցում (այսուհետ նաև՝ Գնանշման հարցում):

2. «Նարսան» ՍՊԸ-ն մասնակցել է Պատվիրատուի կողմից հայտարարված Գնանշման հարցմանը, որի 5,7,8 չափաբաժինների մասով (ընդամենը 16 111 000 ՀՀ դրամ) ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից N 9 արձանագրությամբ:

3. Գնանշման հարցման հրավերի 2-րդ բաժնի 2.4 կետով, ի թիվս այլնի, որպես մասնակիցների որակավորման չափանիշ սահմանված է մասնակցի համապատասխան մասնագիտական փորձառություն ունենալու պահանջը:

4. Բողոք բերող անձ «Նարսան» ՍՊԸ-ի կողմից մասնագիտական փորձառության առկայությունը հավաստելու նպատակով Պատվիրատուին է ներակայացվել 01.06.2018 թվականին Պատվիրատուի հետ նախկինում կնքված և պատշաճ կատարված թիվ «ԳՀԱՊՁԲ-10/19-10» ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետ նաև՝ Պայմանագիր) հաշիվ-ապրանքագրերը (Ա-6887150986, Ա-7647921269, Ա- 2834144099, Ա-6293182722, Ա-6329129132, Ա-2268280424) և պայմանագիրը սահմանված ժամկետում կատարելը

հավաստող հանձնման-ընդունման արձանագրություններ (N01, N02, N03, N04, N05, N06): Ուղարկված փաստաթղթերից մեկ հաշիվ-ապրանքագիր (Ա-2268280424) և N 5 արձանագրությունն ապրանքն ընդունողի կողմից ստորագրված և հաստատված չեն եղել համաձայն թիվ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/24» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի N 11 արձանագրության:

5. Միակողմանի ստորագրված հաշիվ-ապրանքագիրը (Ա-2268280424) և N 5 արձանագրությունը նույն ապրանքի մատակարարման համար դուրս գրված հաշիվ-ապրանքագիրն ու արձանագրությունն են (ընդամենը 9 459 267.53 ՀՀ դրամ), որի երկկողմանի հաստատված և ստորագրված տարբերակների բնօրինակներն առկա են Պատվիրատուի մոտ:

6. Բողոք բերող անձի և Պատվիրատուի միջև 01.06.2018 թվականին կնքված թիվ «ԳՀԱՊՁԲ-10/19-10» պայմանագիրը (ընդամենը 31 495 ՕՕՕ ՀՀ դրամ) կատարվել է պատշաճ:

Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշման (այսուհետ նաև՝ Որոշում) 61-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը, որպես սույն կետի 1-ին ենթակետով սահմանված որակավորման չափանիշը (մասնագիտական փորձառություն) հիմնավորող փաստաթուղթ, ներկայացնում է նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի) և դրա հաշիվ-ապրանքագրերի պատճենները, իսկ այդ պայմանագրի (պայմանագրերի) պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած, պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:

Վերոնշյալ իրավանորմի վերլուծությունից հետևում է, որ գնման ընթացակարգի մասնակցի մասնագիտական փորձառության հիմնավորումը հավաստվում է նախկինում կնքված պայմանագրի շրջանակներում ստանձնած պարտավորությունների պատշաճ կատարման փաստով և տվյալ փաստի առկայության վերաբերյալ եզրահանգման համար բավարար հիմք է հանդիսանում նշված պայմանագիրը սահմանված ժամկետում կատարելու մասին կողմերի միջև հաստատված հաձնման-ընդունման արձանագրությունը (ակտը):

Որոշման 61-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված կարգավորումները նպատակ են հետապնդում հավաստելու գնման ընթացակարգի մասնակցի բարեխղճությունը

քաղաքացիաիրավական հարաբերություններում, և նշված փաստը հաստատելու կամ հերքելու նպատակով Որոշման 67-րդ կետով Պատվիրատուին ընձեռված է բավականին լայն գործիքակազմ՝ մասնակիցների կողմից ներկայացված տվյալների հավաստիությունը ստուգելու նպատակով, մասնավորապես Գնահատող հանձնաժողովը կարող է ստուգել մասնակցի ներկայացրած տվյալների իսկությունը օգտագործելով պաշտոնական աղբյուրներից ստացված տվյալներ կամ դրա մասին ստանալով իրավասու մարմինների գրավոր եզրակացությունը: Նման հարցում ուղարկվելու դեպքում համապատասխան պետական և տեղական ինքնակառավարման մարմինները հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում տրամադրում են գրավոր եզրակացություն: Եթե մասնակցի ներկայացրած տվյալների իսկության ստուգման արդյունքում տվյալները որակվում են իրականությանը չհամապատասխանող, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է:

Սույն բողոքի փաստերի համաձայն՝ բողոք բերող անձի կողմից որպես մասնագիտական փորձառության չափանիշի առկայության հավաստում ներկայացվել է 01.06.2018 թվականին կնքված «ԳՀԱՊՁԲ-10/19-10» պայմանագիրը, որի շրջանակներում գնորդի կողմում մասնակցել է նույն պատվիրատուն՝ Պաշտպանության նախարարությունը:

Հատկանշական է այն հանգամանքը, որ Պատվիրատուի տիրապետման ներքո առկա է բողոք բերող անձի կողմից իր մասնագիտական փորձառությունը հավաստող փաստաթղթերի փաթեթը և Պատվիրատուի կողմից բավարար շրջահայացություն ցուցաբերվելու դեպքում վերջինս կարող էր հստակեցնել բողոք բերող անձի մոտ մասնագիտական փորձառության մասին որակավորման չափանիշի առկայության փաստը, ինչը չի կատարվել Որոշմամբ սահմանված կարգավորումների զուտ տեխնիկական մեկնաբանության արդյունքում: Միևնույն ժամանակ, «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/24» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի N 11 արձանագրությամբ հավաստվել է, որ բողոք բերող անձի մոտ առկա է եղել Պայմանագրի շրջանակներում կողմերի միջև երկկողմանի հաստատված հաշիվ-ապրանքագիրը և N5 արձանագրությունը, ինչը, սակայն, չի քննարկվել գնահատող հանձնաժողովի կողմից՝ սահմանված ժամկետում ներկայացված չլինելու պատճառով: Նշենք, որ Պայմանագրի շրջանակներում կողմերի միջև երկկողմանի հաստատված հաշիվ-ապրանքագիրը և N5 արձանագրությունը ուղարկվել է Պատվիրատուին 13.06.19թ.-ին, իսկ N 11 արձանագրությունը կազմվել է 14.06.19թ.-ին:

Պատվիրատուի և բողոք բերող անձի միջև 01.06.2018 թվականին կնքված «ԳՀԱՊՁԲ-10/19-10» պայմանագրի 5.4. կետով սահմանված է, որ եթե հանձնման-

ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող օրվանից հաշված հինգ աշխատանքային օրվա ընթացքում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրակքը համարվում է ընդունված: Ուստի, նշված կարգավորումը նույնպես հիմք է տալիս եզրակացնելու, որ Պատվիրատուի և բողոք բերող անձի միջև 01.06.2018 թվականին կնքված «ԳՀԱՊՁԲ-10/19-10» պայմանագիրը «Նարսան» ՍՊԸ-ի կողմից կատարված է պատշաճ, ինչի կապակցությամբ էլ Պատվիրատուն մինչ օրս «Նարսան» ՍՊ ընկերությանը չի ներկայացրել որևէ պահանջ:

Որոշման 61-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը՝ (կամ հանրագումարային ծավալը) գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից, որից առնվազն մեկ պայմանագրի շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից:

Բողոք բերող անձի կողմից թիվ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/24» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում մասնագիտական փորձառության հիմնավորման նպատակով ներկայացված Պայամանագրի հաշիվ-ապրանքագրերի և Պայմանագիրը սահմանված ժամկետում կատարելը հավաստող ընդունման-հանձնման արձանագրությունների ուսումնասիրությունից պարզվում է, որ, նույնիսկ փաթեթում ընդգրկված և միակողմանի ստորագրված հաշիվ-ապրանքագիրը (Ա-2268280424), N5 արձանագրությունը չքննարկելու դեպքում, ներկայացված մնացած փաստաթղթերով հավաստվում է, որ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/24» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում մասնակցի կողմից ներկայացված Պայմանագիրը համարվում է նմանատիպ, քանի որ Պայմանագրի շրջանակներում մատակարարված ապրանքների ծավալը պակաս չէ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/24» գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում բողոք բերող անձի կողմից ներակայցված գնային առաջարկի հիսուն տոկոսից:

Վերոգրյալի հիման վրա փաստում ենք, որ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/24» գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում բողոք բերող անձ «Նարսան» ՍՊԸ-ի կողմից մասնագիտական փորձառության որակավորման չափանիշի առկայությունը

հիմնավորելու նպատակով ներկայացված փաստթղթերով ապահովվում է Որոշման 61-րդ կետով հետապնդվող նպատակը՝ պարտավորությունները մասնակցի կողմից պատշաճ կատարված լինելու և Պայմանագիրը նմանատիպ համարվելու փաստի հավաստումը:

Նշենք նաև, որ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/24» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի 5, 7, 8 չափաբաժինների մասով այլ կազմակերպությանը առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչելու դեպքում Պատվիրատուն պետք է վճարի 617 000 ՀՀ դրամ գումար ավելի շատ նույն ապրանքների ձեռքբերման համար:

Ելնելով վերոգրյալից Բողոքներ քննող անձին խնդրել են՝

1. Չեղյալ հայտարարել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/24» գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի թիվ 11 արձանագրության 1.3 կետով «Նարսան» ՍՊԸ-ի ներկայացրած հայտը մերժելու մասին որոշումը,

2. Չեղյալ հայտարարել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/24» գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի թիվ 11 արձանագրության 1.4 կետով «Նարսան» ՍՊ ընկերությանը գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու վերաբերյալ որոշումը:

3. <u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը</u>.

Բողոքներ քննող անձը 25.06.2019թ. գրությամբ դիմել է ՀՀ պաշտպանության նախարարությանը՝ հնարավորություն տալով «Նարսան» ՍՊԸ-ի կողմից 24.06.2019թ. ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Ներկայացված դիրքորոշմամբ Պատվիրատուն հայտնել է հետևյալը.

«ՀՀ ՊՆ կարիքների համար «Շինանյութի և տնտեսական ապրանքների» գնման «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/24» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի 5-րդ, 7-րդ և 8-րդ չափաբաժինների վերաբերյալ «Նարսան» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ԳԲՔԱ-ԼՕ-2019/44 բողոքի առնչությամբ տեղեկացնում եմ.

«Նարսան» ՍՊԸ-ն գնահատող հանձնաժողովի կողմից 5-րդ, 7-րդ և 8-րդ չափաբաժինների մասով ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից: Սահմանված կարգով վերոնշյալ մասնակցին համակարգի (armeps.am) միջոցով ծանուցվել է որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելու վերաբերյալ:

Գնահատող հանձնաժողովի առաջարկի հիման վրա մասնակիցը սահմանված ժամկետում և կարգով ներկայացրել է ընթացակարգի հրավերի 2-րդ մասի՝ հայտը պատրաստելու հրահանգի 3.1 կետով նախատեսված որակավորման փաստաթղթեր, սակայն գնահատման արդյունքում հանձնաժողովը պարզել է, որ «Նարսան» ՍՊԸ-ի կողմից չեն ներկայացվել մասնագիտական փորձառությունը հավաստող հրավերով սահմանված փաստաթղթերը:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2011թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետը՝ հանձնաժողովը 11.06.2019թ. կայացած նիստում որոշել է մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և առաջարկել մասնակցին մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել առկա անհամապատասխանությունները:

Մասնակցի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել են ծանուցմամբ պահանջված փաստաթղթերը, որի քննարկման ժամանակ գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ ներկայացված փաստաթղթերում առկա են անհամապատասխանություններ (մեկական հաշիվ-ապրանագիր և հանձնման-ընդունման արձանագրություն ստորագրված և հաստատված չեն): Սահմանված ժամկետի ավարտից հետո, 13.06.2019թ. մասնակցի կողմից ուղարկվել են դրանց շտկված տարբերակները, որոնք սակայն հանձնաժողովի կողմից չեն քննարկվել, քանի որ, ինչպես նշվեց, ներկայացվել էին օրենքով սահմանված ժամկետի խախտմամբ (մանրամասն տեղեկությունները ներառված են հանձնաժողովի նիստերի արձանագրություններում), ուստի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 48-րդ կետի պահանջները, մերժել է «Նարսան» ՍՊԸ-ի հայտը:

4. <u>ԳԲՔԱ-LO-2019/44 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի փաստերի համաձայն՝

ՀՀ պաշտպանության նախարարության կողմից իր կարիքների համար «Շինանյութի և տնտեսական ապրանքների» ձեռքբերման նպատակով հայտարարավել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/24» ծածկագրով գնման ընթացակարգ (այսուհետև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել նաև «Նարսան» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետև՝ նաև Հանձնաժողով) 26.04.2019թ. կայացած նիստի թիվ 9 արձանագրության համաձայն՝ «Նարսան» ՍՊԸ-ն 5-րդ, 7-րդ և 8-րդ չափաբաժինների մասով ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

Հանձնաժողովը, սահմանված կարգով, www.armeps.am էլեկտրոնային համակարգի միջոցով ոչ ավտոմատ ծանուցման եղանակով Ընկերությանը ծանուցել է որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելու վերաբերյալ:

Գնահատող հանձնաժողովի առաջարկի հիման վրա մասնակիցը սահմանված ժամկետում և կարգով ներկայացրել է ընթացակարգի հրավերի 2-րդ մասի՝ հայտը պատրաստելու հրահանգի 3.1 կետով նախատեսված որակավորման փաստաթղթեր, սակայն գնահատման արդյունքում հանձնաժողովը պարզել է, որ «Նարսան» ՍՊԸ-ի կողմից չեն ներկայացվել մասնագիտական փորձառությունը հավաստող հրավերով սահմանված փաստաթղթերը:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2011թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետը՝ Հանձնաժողովը 11.06.2019թ. կայացած թիվ 10 արձանագրությամբ որոշել է մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և առաջարկել մասնակցին մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել առկա անհամապատասխանությունները:

Մասնակցի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել են ծանուցմամբ պահանջված փաստաթղթերը, որի քննարկման ժամանակ գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ ներկայացված փաստաթղթերում առկա են անհամապատասխանություններ (մեկական հաշիվ-ապրանագիր և հանձնման-ընդունման արձանագրություն ստորագրված և հաստատված չեն):

Սահմանված ժամկետի ավարտից հետո՝ 13.06.2019թ.-ին, մասնակցի կողմից ուղարկվել են դրանց շտկված տարբերակները, որոնք սակայն հանձնաժողովի կողմից չեն քննարկվել՝ օրենքով սահմանված ժամկետի խախտմամբ ուղարկված լինելու հանգամանքից ելնելով:

14.06.2019թ. կայացած թիվ 11 արձանագրությամբ, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 48-րդ կետի պահանջները, Գնահատող հանձնաժողովը որոշել է մերժել «Նարսան» ՍՊԸ-ի հայտը:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցությանը, որ «Նարսան» ՍՊԸ-ի կողմից 24.06.2019թ.-ին ներկայացված բողոքն անհիմն է, ենթակա է մերժման ամբողջությամբ, հետևյալ պատճառաբանությամբ.

Այսպես՝

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշներին: Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող՝

1) մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը.

2) մասնագիտական փորձառություն.

3) տեխնիկական միջոցներ.

4) ֆինանսական միջոցներ:

5) աշխատանքային ռեսուրսներ:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտից հետո ոչ ուշ քան հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ: Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Կարգի 46-րդ կետի համաձայն՝ սույն կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված ժամկետի ավարտին հաջորդող աշխատանքային օրը քարտուղարն էլեկտրոնային եղանակով հանձնաժողովի անդամներին միաժամանակ տրամադրում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի պատճենները, գնահատման թերթիկների երկուական օրինակ և կոմիտեից ստացված տեղեկատվությունը: Հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրվում է ոչ ուշ, քան փաստաթղթերը հանձնաժողովի անդամներին տրամադրվելուն հաջորդող երրորդ աշխատանքային օրը: Ընդ որում, ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված տեխնիկական բնութագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին, իսկ անհամապատասխանություն արձանագրելու դեպքում հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 47-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված՝ ներառյալ կոմիտեի կողմից տրամադրված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը…:

Կարգի 48-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից.

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Վերոնշյալ իրավակարգավորումների վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն հետևության, որ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշներին՝ ունենալով պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը, մասնագիտական փորձառություն, տեխնիկական միջոցներ, ֆինանսական

միջոցներ, աշխատանքային ռեսուրսներ, որոնց առկայության (համապատասխանության) դեպքում է հնարավոր հայտը գնահատել հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Այն դեպքում, երբ հայտերի բացման նիստի ավարտից հետո էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցված առաջին տեղն զբաղեցրած մասնակցի ներկայացրած որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը ներկայացվել են ոչ ամբողջական կամ դրանց գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ արձանագրվել են անհամապատասխանություններ, ապա հանձնաժողովի քարտուղարը կրկին անգամ էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից.

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Կարգի 61-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ մասնակիցների՝ Օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նախատեսված՝ «Մասնագիտական փորձառություն» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) հրավերով պահանջվում է, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն, որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից, որից առնվազն մեկ պայմանագրի շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից.

Հրավերի 2.5 կետի համաձայն.

«Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը սահմանվում և գնահատվում է հետևյալ կարգով՝

ա. մասնակիցը պետք է հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրած լինի նմանատիպ առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատակարարված ապրանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ սույն ընթա¬ցա¬կարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից: Ընդ որում առնվազն մեկ պայմանագրի շրջանակում մատակարարված ապրանքների ծավալը գումարային արտահայ¬տությամբ պետք է պակաս չլինի սույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից:

Սույն ընթացակարգի իմաստով նմանատիպ են համարվում 1-ին, 11-րդ, 20-րդ և 21-րդ չափաբաժինների մասով տնտեսական ապրանքների, իսկ մնացած չափաբաժինների մասով՝ շինանյութերի մատակարարված լինելը:

բ. սույն ենթակետի ա) պարբերությամբ նախատեսված պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորելու համար մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն, պայմանով, որ առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում սույն հրավերով սահմանված կարգով և ժամկետներում հանձնաժողովին կներկայացնի նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի) և դրա հաշիվ ապրանքագրերի պատճենները, իսկ այդ պայմանագրի (պայմանագրերի) պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:

գ. մասնակցի որակավորումը այս չափանիշի գծով գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն ենթակետով նախատեսված պայմաններն ու պահանջները:

Վերոնշյալ նորմերի համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ մասնակիցների «Մասնագիտական փորձառություն» չափանիշը գնահատելու համար մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն, որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագիր:

Ընդ որում նախկինում կատարված պայմանագիրը գնահատվում է նմանատիպ, եթե դրա շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում նշել, որ Կարգի 61-րդ կետի դիսպոզիցիայից (բովանդակությունից) ուղղակի հետևում է, որ «նմանատիպ պայմանագիր» եզրույթն իրենից ներկայացնում է երեք կարևոր միաժամանակյա վավերապայմանների առկայություն, դրանք են՝

1. Պայմանագիրը պետք է կատարված լինի հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում,
2. Պետք է կատարված լինի պատշաճ ձևով,
3. Գումարային արտահայտությամբ, չպետք է պակաս լինի տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից և առնվազն մեկ պայմանագրի շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը գումարային արտահայտությամբ, չպետք է պակաս լինի տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից:

Սույն գործի փաստերի հիման վրա, Բողոքներ քննող անձը փաստում է, որ ՀՀ պաշտպանության նախարարության կողմից «Շինանյութի և տնտեսական ապրանքների» ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/24» ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցության հայտ ներկայացրած «Նարսան» ՍՊԸ-ն 5-րդ, 7-րդ և 8-րդ չափաբաժինների մասով ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

Հանձնաժողովը, սահմանված կարգով, www.armeps.am էլեկտրոնային համակարգի միջոցով ոչ ավտոմատ ծանուցման եղանակով Ընկերությանը ծանուցել է որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելու վերաբերյալ:

Գնահատող հանձնաժողովի առաջարկի հիման վրա մասնակիցը սահմանված ժամկետում և կարգով ներկայացրել է ընթացակարգի հրավերի 2-րդ մասի՝ հայտը պատրաստելու հրահանգի 3.1 կետով նախատեսված որակավորման փաստաթղթեր, սակայն գնահատման արդյունքում հանձնաժողովը պարզել է, որ «Նարսան» ՍՊԸ-ի կողմից չեն ներկայացվել մասնագիտական փորձառությունը հավաստող հրավերով սահմանված փաստաթղթերը:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2011թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետը՝ Հանձնաժողովը 11.06.2019թ. կայացած թիվ 10 արձանագրությամբ որոշել է մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և առաջարկել մասնակցին մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել առկա անհամապատասխանությունները:

Մասնակցի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել են ծանուցմամբ պահանջված փաստաթղթերը, որի քննարկման ժամանակ գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ ներկայացված փաստաթղթերում առկա են անհամապատասխանություններ (մեկական հաշիվ-ապրանագիր և հանձնման-ընդունման արձանագրություն ստորագրված և հաստատված չեն):

Սահմանված ժամկետի ավարտից հետո՝ 13.06.2019թ.-ին, մասնակցի կողմից ուղարկվել են դրանց շտկված տարբերակները, որոնք սակայն հանձնաժողովի կողմից չեն քննարկվել՝ օրենքով սահմանված ժամկետի խախտմամբ ուղարկված լինելու հանգամանքից ելնելով:

14.06.2019թ. կայացած թիվ 11 արձանագրությամբ, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 48-րդ կետի պահանջները, Գնահատող հանձնաժողովը որոշել է մերժել «Նարսան» ՍՊԸ-ի հայտը:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Նարսան» ՍՊԸ-ն Պատվիրատուի կողմից սահմանված շտկման ժամանակահատվածում, չներկայացնելով իրեն ներկայացված պահանջների համապատասխանության հիմնավորման նպատակով լրացուցիչ այլ փաստաթղթեր, տեղեկություններ, նյութեր չի բավարարել Օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով և Հրավերի 2.5 կետով սահմանված պահանջներին, իսկ Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Ուստի, տվյալ պարագայում, ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից մասնակցի հայտը մերժելու մասին որոշումն իրավաչափ է և բխում է գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներից:

Ելնելով վերոգրյալից՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

«Նարսան» ՍՊԸ-ի կողմից 24.06.2019թ.-ին ներկայացրած բողոքն ամբողջությամբ մերժել՝ անհիմն լինելու պատճառաբանությամբ:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**